

Սարգիս Վ. Թէ Կ. Պոլսոյ Կոլոտ Պատրիարքէն պէտք եղած ընծայագիրն առած, եւ Թէ Երուսաղեմի Գրիգոր Պատրիարքին յանձնարարականը, ճամբայ ելաւ: Կոլոտ Պատրիարքն յանձնեց իրեն նաեւ «սրկի՛՛հ ինչ ոսկեայ, գեղեցկապաճոյճ եւ անդամանդեայ», զոր ընծայ կ'ընէր Էջմիածնի եկեղեցւոյն: Ճամբան ընկերացաւ Աբրահամ Վ. Կրետացւոյ, որ Թրակիոյ Ռեդեստոնի (Ռոտոսթոյ) Առաջնորդն էր, որ նոյնպէս Էջմիածին կ'երթար ուխտի: Երկուքը միասին Կարին հասան, ուր Սարգիս Վ. քանի մ'ամիս մնաց. իսկ Աբրահամ Վ. ճամբան շարունակեց, որմէ ետեւ Սարգիս Վ. ալ Էջմիածին հասաւ:

### Յ.

Սարգիս Վ. Էջմիածնի Սիւնողին մէջ Աբրահամ Կրետացի Եպիսկոպոսը Կաթողիկոս ընտրել կու տայ: Կեսարիոյ Արքեպիսկոպոս կը ձեռնադրուի եւ «Շնորհալի» անունը կ'առնու: Աթոռը կը դառնայ 1735ին նոյն տարին Կ. Պոլիս կ'երթայ եւ կը վերադառնայ: Ժողովուրդը կը հակառակի իրեն՝ կաթողիկեայ ըլլալուն համար, 1737ին Կ. Պոլիս կ'երթայ: Արքեպիսկոպոսութեան կոնդակին քնազիրը, Կաթողիկեայ ըլլալուն պատճառն ու ժամանակը: Ղուկաս Վ. Խարքերդցի եւ իր 19 կտոր մեծահատոր Թարգմանութիւնները լատին հեղինակներէն: Սարգիս Վ. 1730էն յառաջ կաթողիկեայ, իրեն համար 1732ին եւ 1740ին զրուած ձեռագիրը: 1743ին կաթողիկէ դաւանութիւն յղած է ի հոռմ:

Սարգիս Վ. Էջմիածին կը հասնի 1734ին աշնան մէջերը՝ երբ Մշեցի կամ Խօշապցի Աբրահամ կաթողիկոսը մահուան անկողինն ինկած էր եւ քանի մ'օրէն (11 նոյ.) մեռաւ: Նոր ըն-